

7382



ԱՏԵՆԴԱԼ



ՎԱՆԻՆԱ

ՎԱՆԻՆԻ



ՊԵՏՅՈՍ

84

Վ-93

1938



ՀՅՅԳԱԳՈՒՆ

Պ Ս Զ



ՊԵՏԻՐԱՏ

84
U-33
ԱԿ.

ՍՏԵՆԴԱԼ - 20 APR 2006
19 NOV 2010

ՎԱՆԻՆԱ ՎԱՆԻՆԻ

ՖՐԱՆՍ. ԹԱՐԳՄԱՆԵՑ
Վ. ԳԻՂԱՆՑԱՆ



1302
38

182...-ի գարնան մի լերեկո վողջ Հուովը շարժման մեջ եր. հայտնի բանկիր պ. դուքս Բ...ը, Վենետիկյան հրապարակի վրա գտնվող իր նոր պալատում, պարահանդես եր տալիս: Պալատը զարդարելու համար դուքսը հավաքել եր այն ամենը, ինչ կարողացել էյին տալ Իտալիայի գեղարվեստը և Փարիզի ու Լոնդոնի պերճանքը:

Հասարակությունը բազմամարդ եր: Անգլիայի ազնվազարմ, սեթեթ, խարտյաշ գեղեցկուհիները շատ էյին ջանացել այդ պարահանդեսին ներկա լինելու պատվին արժանանալու, և այժմ գալիս էյին խուռն բազմությամբ: Հոսի գեղեցկագույն կանայք նրանց հետ մրցում էյին իրենց հրաշալի գեղեցկությամբ:

Իր հոր ուղեկցությամբ ահա սրան մտավ մի ջահել աղջիկ, վորի հրացայտ աչքերն ու սևաթույր մազերը վկայում էյին նրա հոռմուհի լինելը: Բոլորի հայացքները նրա վրա սեեովեցին: Նրա յուրաքանչյուր շարժումն արտակարգ վեհություն եր արտահայտում:

Ոտաբերկրյա հյուրերը ապշել էյին պարահանդեսի անսովոր շքեղությունից ու ճոխությունից: «Մա գեղազանցում ե,—ասում էյին նրանք,—լեվրոսպական թագավորների տոնախմբություններին»:

Հիրավի, թագավորները հռոմեյական ճարտարապետութեամբ կառուցված պալատներ չունեն: Բացի այդ, նրանք ստիպված են իրենց տոնախմբութիւններին հրավիրելու արքունի տիկիներին, մինչդեռ պ. դուքս Բ...-ն միայն սիրուն կանանց էր հրավիրում: Այդ յերեկո նրա ընտրութիւնը սովորականից առավել հաջող էր: Տղամարդիկ ըստամենայնի հիացած էին:

Բնականաբար հարց ծագեց, թե այդ հրաշագեղ կանանցից ո՞վ էր ամենագեղեցիկը: Միառժամանակ կարծիքները տարամիտեցին. բայց ի վերջո իշխանուհի Վանինա Վանինին, կրակոտ աչքերով, սևահեր այն ջահել աղջիկը, հռչակվեց պարահանդեսի թագուհի: Ոտարե՛րկրացիներն ու յերիտասարդ հռոմեյացիները անմիջապէս թողեցին բոլոր մուս դահլիճները և փութացին նրա մոտ:

Նրա հայրը, իշխան զոն Աստրուբալ Վանինին, ցանկաց, վոր Վանինան նախ պարի յերկու թե լերեք գերմանացի իշխանավորների հետ: Այնուհետև նա ընդունեց մի քանի գեղեցկագեմ և մեծազարմ անգլիացիների հրավերը, վորոնք սակայն շուտով ձանձրացրին նրան իրենց փրուն տեսքով: Կարծես Վանինային ավելի մեծ հաճույք էր պատճառում՝ տանջել յերիտասարդ Լիվիո Սավելլին, վորը խելահեղորեն սիրահարված էր նրա վրա: Դոն Լիվիո Սավելլին Հռոմի ամենափայլուն յերիտասարդն էր, սերված՝ իշխանական ցեղից: Վանինայի աչքում, սակայն նա մի խոշոր թերութիւն ուներ. յեթե նրան մի վեպ առաջարկէր կարգալու, նա դեռ քսաներորդ եջին չհասած գիրքը մի կողմ կշարտեր, ասելով, թե դա գլուխ է ցավեցնում:

Մոտ կես գիշերին պարահանդեսում տարածվեց մի լուր, վորը մեծ տպավորութիւն գործեց հրավիրվածների վրա: Հենց այդ յերեկո Սենտ-Անժ բերդի կալանավոր մի յերիտասարդ կարբոնարի¹⁾ ծպտված փախել էր բանտից: Հասնելով բանտի վերջին պահակախմբին, նա անմիտ հանդգնութեամբ դաշույնը ձեռքին հարձակվել էր դինվորների վրա. բայց ինքն էլ վիրավորվել էր: Այժմ վոստիկանները հալածում էին նրան փողոցներում, հետևելով արյան հետքերին և հուսալով, վոր շուտով կձերբակալեն փախստականին:

Մինչ նրանք այս դեպքն էին պատմում, զոն Լիվիո Սավելլին՝ հմայված Վանինայի հրապույժով ու հաջողութեամբ, պարելուց հետո առաջնորդեց նրան իր տեղը, ասելով, սիրուց գրեթե գլուխը կորցրած.

—Բայց, ասեք խնդրեմ, ո՞վ կարող է ձեզ դուր գալ:

—Հենց նոր բանտից փախչող այն յերիտասարդ կարբոնարին,—պատասխանեց Վանինան: Նա զոնն մի բան արեց, վորն առավել նշանակալից է, քան թե լոկ ծնվելու նեղութիւն կրելը:

Վանինայի հայրը մոտեցավ աղջկան: Իշխան զոն Աստրուբալը չափազանց հարուստ մի մարդ էր, բայց իր գործերում միանգամայն անփուլթ. քսան տարվա ընթացքում նա վոչ մի անգամ հաշիվ չէր պահանջել իր գործակատարից, վորը դրամ էր փոխ տալիս նրան նրա իսկ յեկամուտներից, և այն էլ մեծ տոկոսով: Յեթե դուք փողոցում հանդիպէիք նրան՝ կկարծեյիք թե դա, մի ծեր գերասան է: Դուք բնա՛վ չէիք նկատի այն հինգ թե վեց խոշոր մատանիները, վորոնք՝

տհազին աղամանդներով ծանրաբեռնում էյին նրա մատները: Նրա յերկու վորդիները յեղվիաներ²⁾ էյին, վորոնք հետո մահացել էյին խելագար վիճակում: Իշխանն արդին սոռացել էր նրանց: Ս. կաջն նա շատ էր վշտանում, վոր իր միակ աղջիկը, Վանինան, չէր ուզում ամուսնանալ: Նա տանինը տարեկան հասակում արդին մի քանի փայլուն առաջարկություններ էր մերժել: Ի՞նչ էր նրան նտիպում այդպես վարվելու:— Հենց այն, ինչ վոր ստիպեց Սիլլային³⁾ հրաժարվելու իշխանությունից— դեպի հոռմեյացիներն ունեցած արհամարհանքը:

Պարահանդեսի հաջորդ որը Վանինան նկատեց, թե ինչպես իր հայրը, աշխարհի ամենամահող մարդը, — վորն իր վողջ կյանքում նեղություն անգամ չէր կրել ձեռքը բանալի վերցնել, — մեծ խնամքով փակում էր մի փոքր սանդուխքի դուռը, վորը տանում էր դեպի պալատի չերորդ հարկում գտնվող բնակարանը: Այդ բնակարանի լուսամուտները բացվում էյին նաընջենիներով շրջապատված մի պատշգամբի վրա:

Վանինան զնայ քաղաք մի քանի այցելություններ կատարելու: Վերադարձին, պալատի գլխավոր դարպասը փակ գտնելով հրավառության պատրաստությունների պատճառով, նրա կռեթն անցավ յտոնամուտքով: Վանինան աչքերը վեր բարձրացրեց և մեծ զարմանքով նկատեց, վոր իր հոր այնքան խնամքով փակած լուսամուտներից մեկը այժմ բաց էր: Նա արձակեց իրեն ուղեկցող սպասուհուն, բարձրացավ պալատի ամենավերին հարկը. և յերկար փնտրելուց հետո, վերջապես գտավ այն փոքրիկ վանդակածած, լուսամուտը, վորը բացվում էր նարնջենիաշար պատշգամ-

բի վրա: Լուսամուտը յերկու քայլաչափ հեռու լեր: Անկասկած այդ սենյակում մարդ էր ապրում: Սակայն ո՞վ:

Հետեյալ որը, Վանինային հաջողվեց ձեռք բերել նարնջենիաշար պատշգամբի վրա բացվող դռան բանալին, նա աննկատելի մոտեցավ տակավին բաց լուսամուտին, թաղնվեց փեղկերի հետև, և բաց վանդակապատից ներս վազեց: Սենյակի խորքում անկողին կար, իսկ անկողնում՝ մի մարդ: Վանինայի առաջին շարժումն յեղավ հեռանալ այնտեղից, բայց աթոռի վրա նկատեց կանացի հագուստ: Ուշադրությամբ դիտելով անկողնում պառկած մարդուն, Վանինան տեսավ, վոր նա խարոյաչ էր և ըստ յերևութիւն բոլորովին յերիտասարդ: Նա այլևս չկասկածեց, վոր դա կին էր: Աթոռի վրա ընկած հագուստը արյունոտված էր, արյուն կար նաև նստարանին դրված կանացի կոշիկների վրա: Անծանոթունին շարժվեց. Վանինան նկատեց, վոր նա վիրավորված էր: Նրա կուրծքը ծածկված էր արյունշաղախ մի մեծ լաթով, վորը սոսկ յերիզով էր կապված. պարզ էր, վոր դա վիրաբույժի գործ չէր:

Վանինան նկատեց նաև այն, վոր հայրը ամեն որ ժամը չորսի մոտերքը առանձնանում էր իր սենյակում, և ապա գնում անծանոթունու մոտ, վորտեղից վաղ վերադառնալով, նստում էր կռեթ և մեկնում կոմսունի Վիթթեյսկիչի տունը: Հենց վոր հայրը հեռանում էր, Վանինան պատշգամբ էր բարձրանում, վորտեղից կարողանում էր դիտել անծանոթունուն: Նրա զգայուն սիրտը լցվեց համակրանքով ու կարեկցությամբ դեպի անբախտ յերիտասարդ կինը. նա

ճգնուժ եր գուշակել նրա պատմութիւնը: Աթոռի վրա ընկած արյունաթաթախ հագուստը հավանականաբար պատառոտված եր դաշույնի հարվածներից. Վանինան կարող եր համբել հարվածների թիվը:

Նա մի անգամ ավելի պարզորոշ տեսավ անձանոթուհուն. Չահել կինն իր կապույտ աչքերը սևեռել եր լերկնքին, ասես ազոթելիս լիներ: Քիչ անց՝ այդ սիրուն աչքերը լցվեցին արցունքով: Յերիտասարդ եղբանուհին հազիվ կարողացավ զսպել իրեն—չխօսել նրա հետ:

Հետեյալ որը Վանինան մինչև հոր դալը համարձակվեց թագնվել պատշգամբում: Նա տեսավ, թե ինչպես դոն Աստրուբալը մտավ անձանոթուհու մոտ, ձեռքին մի կողով՝ ուտելիքներով լի: Իշխանը մտատանջ ու հուզված եր չերևում, նա հազիվ մի քանի բառ արտասանեց: Խոսեց, այնքան ցածր, վոր Վանինան վոչինչ չկարողացավ լսել, թեպետև լուսամուտի փեղկերը բաց եյին: Այս անմիջապես հեռացավ:

«Յերեի այս դժբախտ կինը վաանգավոր թշնամիներ ունի,—մտածեց Վանինան,—քանի վոր հայրս իր այնքան անհող բնավորութեամբ հանդերձ վոչ վոքի չի վտահում, և ինքը նեղութիւնն և կրում ամեն որ սանդուխքի հարյուր քսան աստիճաններով վեր բարձրանալը:

Մի չերեկո, յերբ Վանինան կամացուկ գլուխը մտնեցնում եր անձանոթուհու լուսամուտին, չերկու կանանց հայացքները հանդիպեցին իրար և այդպիսով թագնվելու անհրաժեշտութիւնը վերացավ: Վանինան ծուռնկ չոքեց, բացականչելով.

—Յես սիրում եմ ձեզ, յես նվիրված եմ ձեզ:

Անձանոթուհին նշան արեց, վոր ներս մանի:

—Յես պետք և ձեզնից ներողութիւն ինդրեմ,—բացականչեց Վանինան,—իմ հիմար հետաքրքրութիւնն անշուշտ վիրավորական պիտի թվա ձեզ: Յերդվում եմ, ձեր գաղտնիքը չասել և չերբեք այլևս չգալ այստեղ, յեթե դուք այդպես եք պահանջում:

—Ո՞վ կարող և իրեն յերջանիկ չհամարել տեսնելով ձեզ, —տասց անձանոթուհին.—Դուք այս պալատում եք ապրում:

—Իհարկե,—պատասխանեց Վանինան,—Բայց յերեի դուք ինձ չեք ճանաչում. յես Վանինան եմ, դոն Աստրուբալի դուստրը:

Անձանոթուհին դարման բով դիտեց Չահել աղջկան, սաստիկ շոտագունեց և ավելացրեց.

—Հույս ունեմ, դուք կայցեկեք ինձ ամեն որ, սակայն կկամենայի, վոր իշխանը չիմանա մեր տեսակցութիւնների մասին:

—Վանինայի սիրտն ուժգին բարախեց. անձանոթուհու վարժունքն ու խոսելակերպն անսահման ազնւրութիւնն եյին արտահայտում: Այս դժբախտ յերիտասարդ կինը, ամենայն հավանականութեամբ, վիրավորիկ և վորեք բարձր աստիճան անձի, կամ թերեւս խանդի ազդեցութեան տակ սպանել և իր սիրեկարին: Վանինան չեր կարողանում չերևակայել, վոր նրա դժբախտութիւնը հետեանք լիներ վորեք սովորական դիպվածի:—Անձանոթուհին ասաց, վոր ինքը վիրավորված և ուսից. վիրքը խորն և և շատ և տանջում իրեն. հաճախ արյուն և հոսում բերնից:

—Միթե ձեզ մոտ դեռ վիրաբույժ չի յեղել,—բացականչեց Վանինան:

—Դուք գիտեք, վոր Հոռոմում վիրաբույժները պարտավոր են վոստիկանութեանը ճշգրիտ տեղեկութեան տալ այն բոլոր վերքերի մասին, վոր նրանք բուժում են: Իշխանն այնքան բարի յե, վոր ինքն անձամբ կապում ե վերքերս անա այս լաթերով:

Անձանոթուհին ամեն կերպ խուսափում եր իր գժբախտութեան մասին խոսելուց: Վանինան խելահորույս սիրեց նրան: Սակայն մի բան ծայր աստիճան զարմացնում եր յերիտասարդ իշխանուհուն, անձանոթ կինը, միանգամայն լուրջ խոսակցութեան ընթացքում մեծ գովարութեամբ եր զսպում հանկարծակի ծիծաղելու իր ցանկութեանը:

—Յես շատ կցանկանայի իմանալ ձեր անունը, — ասով նրան Վանինան:

—Ինձ կլեմանտին են կոչում:

—Լավ, ուրեմն, սիրելի կլեմանտին, վաղը ժամը հինգին յես կգամ ձեզ տեսնելու:

Հետևյալ որը Վանինան իր նոր բարեկամուհուն գտավ շատ ծանր վիճակում:

—Յես ուզում եմ ձեզ մոտ հրավիրել վիրաբուժին, — ասով Վանինան, համբուրելով նրան:

—Յես կնախընտրեմ ավելի շուտ մեռնել, — պատասխանեց անձանոթուհին, — քան թե վտանգել իմ բարեբարներին:

—Մեր ծառաներից մեկի վորդին, — Հասմի նահանգապետի՝ սրբազնագույն Սավելի կատանցարայի վիրաբույժն ե, — առարկեց խանդաղատագին Վանինան: — Նա մեզ նվիրված մարդ ե, և շնորհիվ իր հասարակական դիրքի, վոչ վորից չի վախենում: Հայրս ըստ արժանվույն չի գնահատում նրա հավատարմութեանը. բայց յես կհրավիրեմ նրան:

—Յես վիրաբույժ չեմ կամենում, — բացականչեց անձանոթուհին այնպես սաստկազին, վոր Վանինան զարմացավ: — Դուք ինքներդ հաճախ այցելեցեք ինձ, և յեթե աստված ինձ իր մոտ կանչի, յես կմեռնեմ յերջանիկ՝ ձեր գրկում:

Հաջորդ որն անձանոթուհու գրութեանն ավելի վատացավ:

—Յեթե դուք ինձ սիրում եք, — ասաց Վանինան, հեռանալով նրանից, — ապա թույլ տվեք, վոր հրավիրեմ վիրաբույժին:

—Յեթե նա գա, իմ յերջանկութեանը կխորտակվի:

—Յես իսկույն եթե մարդ կուղարկեմ նրա յետեվից, — շարունակեց Վանինան:

Առանց մի բառ արտասանելու, անձանոթուհին չեա պահեց նրան և նրա ձեռքը բռնելով, շերտ համբուրելով ծածկեց այն: Յերկուսն էլ յերկար լուռ մնացին: Յերիտասարդ կնոջ աչքերը լցվեցին արցունքով: Վերջապես նա թողեց Վանինայի ձեռքը և ասես մահվան ընդառաջ գնալով, ասաց տխրածայն.

—Յես պետք ե հայտնեմ ձեզ իմ գաղտնիքը: Նախանցյալ որը ձեզ ասացի, թե ինձ կլեմանտին են կոչում. յես ստեցի՝ ինքս մի անբախտ կարբոնարի յեմ: Վանինան զարմացահար վեր թռավ տեղից և թողու յես հրելով:

—Չգուցե եմ, — շարունակեց կարբոնարին, — վոր իմ խոստովանութեամբ կկորցնեմ այն միակ բանը, վորը տակավին ինձ կապում ե կյանքին. բայց և այնպես իմ կողմից անազնվութեան կլինեք ձեզ խաբելու: Իմ անունը Պիետրո Միսսիրիլի չե, յես տասնինը տարե-

կան եմ. հայրս մի խեղճ վիրաբույժ է Սենտ-Սնչելո-
-ին-Վատոյում, իսկ յես՝ կարբոնարի: Մեր վենտան՝
հայտնաբերվեց և ինձ Ռոմայնից, շղթայակալ բերին
Հոռոմ: Բանտում ինձ նետեցին մի նեղլիկ խուց, վո-
րը գիշեր ու ցերեկ լուսավորված էր սոսկ մի աղոտ
ձրագով. այնտեղ յես մնացի տասներեք ամիս: Մի
գլխասիրտ մարդ կամեցավ ինձ ազատել: Կանացի շո-
րեր հագցրին ինձ: Յերբ բանտից դուրս եյի գալիս և
անցնում եյի վերջին դռան պահակների մոտից, նը-
րանցից մեկը նախատում, անիծում էր կարբոնարի-
ներին: Յես ապտակեցի նրան: Հավատացնում եմ ձեզ,
վոր դա սին հոխորտանք չեր, այլ սոսկ ցրվածութան
հետևանք: Այս անխոհեմ վարմունքից հետո, գիշերով
հալածված՝ Հոռոմի վողոցներում, վիրավորված սվին-
ների հարվածներով և բոլորովին ուժասպառ՝ յես բաց
դռնով մի տուն մտա. լսեցի, թե ինչպես զինվորներն
իմ յետևից նույնպես ներս խուժեցին: յես լուսամու-
տից ցատկեցի պարտեզ և ընկա այնտեղ զբոսնող մի
կնոջից մի քանի քայլ հեռու:

— Ի՞նչ կոմսուհի վիթթեղեակին եր, իմ հոր բարե-
կամը, — ասաց Վանինան:

— Ի՞նչ, մի՞թե նա ինքն է ձեզ պատմել այդ մա-
սին, — բացականչեց Միսսիրիլին: — Ինչ ել վոր լինի,
այդ տիկինը, վորի անունը յերբեք չպետք է արտա-
սանել, փրկեց իմ կյանքը: Յերբ զինվորները մտան
նրա տունը, վոր ինձ ձերբակալեն, ձեր հայրը ինձ իր
կառիժում նստեցրած՝ հեռացնում էր այնտեղից: Յես
չատ վատ եմ զգում ինձ. անա մի քանի որ և, ինչ
ուսիս վերքը խանգարում է շնչառությունս: Յես շու-

տով կմեռնեմ, և հուսահատ վիճակում, քանի վոր ել
յերբեք չպիտի տեսնեմ ձեզ:

Վանինան լսեց նրան անհամբերությամբ և հետո
արագ հեռացավ:

Միսսիրիլին նրա հրաշագեղ աչքերում կարեկցան-
քի նշույլ անգամ չնկատեց: Նա այնտեղ տեսավ մի-
այն խոցված, բայց հպարտ բնավորության արտա-
հայտություն:

Խորը գիշերին յեկավ վիրաբույժը. նա մենակ էր:
Հուսահատությունը պատեց Միսսիրիլին. նա յերկ-
յուղում էր, թե ել յերբեք չպիտի տեսնի Վանինային:
Նա քանիցս հարցուփորձեց վիրաբույժին, բայց վեր-
ջինս վոչինչ չպատասխանեց. նա լուռությամբ յերա-
կից արյուն աննելով, հեռացավ: Հետևյալ օրը նա
զարձյալ լուռ մնաց: Պիետրոն իր աչքերը չեր հեռաց-
նում պատշգամբի վրա բացվող լուսամուտից, վոր-
տեղից Վանինան սովորաբար մտնում էր սենյակ:
Խեղճ յերիտասարդը սաստիկ դժբախտ էր զգում ի-
րեն: Մի անգամ, մոտ կես գիշերին, նրան թվաց, թե
պատշգամբի սովերում տեսնում է մեկին, թերևս Վա-
նինային:

Հիրավի, Վանինան ամեն գիշեր գնում և այտերը
հպում էր յերիտասարդ կարբոնարի լուսամուտի ա-
պակիներին:

«Յեթե խոսեմ նրա հետ, յես կորած եմ, — ասում
էր նա ինքն իրեն. — վոչ, յես յերբեք նրան չպիտի
տեսնեմ»:

Չնայած այս վճռին, նա ակամա հիշում էր այն
բարեկամությունը, վոր տածել էր այդ յերիտասար-
դի հանդեպ, հիմարաբար նրան կին կարծելով: Այն-
քան քաղցր մոտիկությունից հետո, այժմ անհրա-

Տեղա եր մտառնալ նրան: Այն բողոքներն, յերբ Վանինան ընդունակ եր հանդարտ կշռադատելու, նա սարսափում եր իր մաքերում առաջացած փոփոխութունից: Այն որից ի վեր, ինչ Միսսիբիլիին հայտնել եր նրան իր ով լինելը, նրա առորչա խոհերի բոլոր առարկաներն ասես հեռացել էին և ծածկվել մշուշով:

Մի շարաթ չանցած, մի որ Վանինան՝ զժողովն ու զողորջ, վիրաբույժի հետ մտավ յերիտասարգ կարրոնարի սենյակը: Նա յեկավ ասելու, վոր անհրաժեշտ ե համոզել իշխանին համաձայնելու, վոր հիվանդի մոտ իրեն փոխարինի ծառան: Նա հաղիվ տաս վայրկյան մնաց այնտեղ: Սակայն մի քանի որից հետո, զբողոքած մարդասիրական ղգացումներից, նորից յեկավ վիրաբույժի հետ:

Մի յերեկո, յերբ Միսսիբիլիին արդեն համեմատաբար լավ եր զգում իրեն, և Վանինան նրա կյանքի մասին յերկյուղելու առիթ չուներ, նա համարձակվեց մենակ գնալ նրա մոտ: Վանինային տեսնելով, Միսսիբիլիի սիրտը լեցվեց անհուն բերկրանքով, բայց նա աշխատեց թագցնել իր սերը. ամենից առաջ նա չեր կամենում կորցնել իր ազամարդկային արժանապատվությունը: Վանինան սենյակ մտավ շիկնած ու հուզված, յերկյուղելով, թե յերիտասարգը կսկսի խոսել սիրո մասին. սակայն նա առավել ևս շփոթվեց, յերբ վերջինս ընդունեց նրան այնպիսի բարեկամությամբ, վորն ավելի շուտ աղնվություն և նվիրվածություն եր արտահայտում, քան թե քնքշանք: Յերբ նա ուզեց զուրս գալ սենյակից, Միսսիբիլիին յետ չզգահեց նրան:

Մի քանի որից հետո Վանինան նորից յեկավ և

կրկին հանդիպեց նույն վերաբերմունքին, նույն հարգալիբ հավատարմության ու հավիտենական յերախտագիտության հավաստիքներին: Վանինան ել չեր մտածում կանխել յերիտասարգ կարրոնարի խանդավառ սիրո խոստովանությունը: Այժմ նրան մտատանջում եր սոսկ մի բան. միթե իր սերը փոխադարձ չեր: Մինչ այդ այնքան հպարտ ջահել աղջիկը դառնությամբ զգաց իր խելագարության անհունությունը: Նա ձևացավ կենսուրախ, մինչևիսկ սառն. սկսեց ուշուշ այցելել, բայց չկարողացավ բուրբովին դազարել յերիտասարգ հիվանդին տեսնելուց:

Թեպետև Միսսիբիլիին տոչորվում եր սիրուց, բայց և այնպես նա չեր մոռանում իր անտոհմիկ ծագումն ու ստանձնած պարտականությունները, նա խոստացել եր իրեն լոկ այն ժամանակ Վանինայի հետ խոսել սիրո մասին, յիթե վերջինս ութ որ շարունակ չայցելեր իրեն: Հպարտ իշխանադուստրը այս լուռ կովում մնաց անասան:

Վերջապես մի անգամ նա ասաց ինքն իրեն. «Ե՛հ, ինչ կա վոր, յեթե յես այցելում եմ նրան, դա հաճույքիս համար ե, յես յերբեք չեմ ասի նրան, վոր նա հետաքրքրում ե ինձ»:

Իրանից հետո Վանինան սկսեց հաճախ զնալ Միսսիբիլիի մոտ և յերկար նստել: Յերիտասարգ ազամարդը նրա հետ խոսում եր զուսպ ու քաղաքապարի, ասես քան մարդու ներկայությամբ խոսելիս լիներ: Մի անգամ, յերեկոյան, նրան ամբողջ որը ատելուց և նրա հետ սովորականից ավելի սառը և խիստ լիներու վորոշումից հետո, խոստովանեց, վոր ինքը սի-

1307
38



բում ե նրան: Մի քանի որ հետո, Վանինան այլևս նրան մերժելու բան չունեիր:

Վորքան ել մեծ լինեիր նրա խելագարությունը, այնուամենայնիվ պետք ե խոստովանել, վոր Վանինան միանգամայն յերջանիկ եր: Միսսիրիլին ել բոլորովին չեր մտածում իր արժանապատվության մասին. նա սիրեց այնպես, ինչպես սիրում են առաջին անգամ, տասնինը տարեկան հասակում ե միայն Իտալիայում: Նա այն աստիճան ազնիվ գտնվեց իր բոցավառ սիրո մեջ, վոր մինչև անգամ ամենայն անկեղծությամբ խոստովանեց, թե ինքն ինչպիսի խորամանկության եր դիմել ջանել աղջկա սերը նվաճելու համար: Նա միանգամայն դարմացած եր իր գերազույն յերջանկությամբ:

Աննկատելի արագությամբ անցավ չորս ամիսը: Մի որ ել վերաբուժք վերադարձրեց հիվանդին իր ազատությունը: «Այժմ ինչ պետք ե անեմ յես—մտածեց Միսսիրիլին: Միթե պիտի շարունակեմ թագնելամ մնալ այստեղ՝ Հոռմի ամենագեղեցիկ կանանցից մեկի մոտ: Բայց այն ստոր բռնակալները, վորոնք տասներեք յերկար ամիսներ պահեցին ինձ բանտում, զրկելով արևի լույսից, պիտի կարծեն, թե ընկճել են ինձ ու ուժասպառ արել: Իտալիա, դու իրոք վոր դժբախտ ես, յեթե քո վորդիները այսքան դյուրությամբ լքում են քեզ:

Վանինան չեր կասկածում, վոր Պիետրոլի համար ամենամեծ յերջանկությունը կլինեիր՝ մնալ ընդմիշտ իր հետ: Նա կարծես անսահման յերջանիկ եր, սակայն զորավար Բոնապարտի ասած մի խոսքը զառնորեն արձագանքում եր յերիտասարդի հոգում ե նե-

րագում նրա՝ դեպի կանանց ունեցած վերաբերմունքի վրա: 1796 թվին, յերբ զորավար Բոնապարտը թողնում եր Բրեշյան⁶), նրան մինչև քաղաքի դռներն ուղեկցող թաղապետական պաշտոնյաներն ասում եյին, թե Բրեշյաի բնակիչները ազատութունն ավելի են սիրում, քան մնացած բոլոր իտալացիները:

Այն,—պատասխանեց Բոնապարտը,—նրանք սիրում են այդ մասին խոսել իրենց սիրուհիների հետ:

Միսսիրիլին բռնազբոսիկ հանդարտությամբ ասաց Վանինային.

—Չենց վոր գիշերը վրա հասնի, յես պետք ե գնամ:

—Բայց աշխատիր, անպատճառ այգաբացից առաջ վերադառնալ պալատ. յես քեզ կսպասեմ:

—Այգաբացին յես Հոռմից արդեն մի քանի մղոն հեռու կլինեմ:

—Շատ լավ,—պատասխանեց Վանինան հպարտ իսկ մեր եք գնալու:

—Ռոմանյա, վրիժառու լինելու:

—Քանի վոր յես հարուստ եմ,—ասաց Վանինան, միանգամայն հանդարտ,—ապա կհուշամ, վոր դուք չեք մերժի ինձնից ընդունելու գեներ ե դրամ:

Միսսիրիլին միառժամանակ իր անվրդով աչքերը սևեռեց ջանել աղջկա վրա, ապա նետվեց նրա գիրկը:

—Հոգակա,—բացականչեց նա,—դու ստիպում ես ինձ մոռանալ ամեն ինչ, մինչև իսկ պարտքս: Սակայն, վորքան առավել ազնիվ ե քո սիրտը, այնքան առավել լավ պիտի հասկանաս ինձ:

Վանինան դառն արտասովեց. ի վերջո վորոշվեց, վոր Միսսիրիլին Հոռմից մեկնի մի որ հետո:

—Պիետրո, —ասաց նա հեռեցալ ուրը,—դուք հաճախ

ասել եք, վոր մի անվանի մարդ, որինակ, մեծ հա-
րըստութեան տեր վորեւ հոռոմեյացի իշխան, խոշոր
ծառայութեան կարող և մատուցել ազատութեան գոր-
ծին, յիթե յերբեկեցե Ավստրիան, մեր յերկրից դուրս,
խնդրել մեծ կովի մեջ:

—Անշուշտ,—պատասխանեց Պիետրոն պարմացած:

—Արդ, դուք արիասիրտ եք. ձեզ պահատում ե սոսկ
բարձր դիրքը: յես առաջարկում եմ ձեզ իմ ձեռքը և
յերկու հարցուր հազար լիւր⁶) լիկամուտ: Յեռ ինձ վրա
յեմ վերցնում ստանալու հորս համաձայնութեանը:

Պիետրոն նեավեց նրա վտաքերը. ուրախութեանը
փայլեց Վանինայի դեմքին:

—Յեռ սիրում եմ ձեզ խելահեղորեն,—ասաց Պիետ-
րոն նրան,—բայց յես իմ հայրենիքի հեք ծառան եմ,
և վորքան առավել դժբախտ ե Իտալիան, այնքան ա-
ռավել հալատարիմ պիտի մնամ նրան: Դոն Աստրու-
բալի համաձայնութեանը ստանալու համար հարկա-
վոր ե մի քանի տարի անազնիվ դեր ստանձնել: Վա-
նինա, յես մերժում եմ քեզ:

Միասիրիլին շտապեց այս խոսքերով կանխել հրա-
պուրիչ առաջարկից գայթակղվելու հնարավորութեանը:
Նա արդեն կորցնում եր իր արիութեանը:

—Իմ գժբախտութեանը այն ե, վոր յես սիրում
եմ քեզ կյանքից առավել, և Հոռոմից հեռանալն ինձ
համար տանջանք ե: Ա՛հ, ինչո՞ւ համար Իտալիան ա-
զատագրված չե բարբարոսներից: Ի՞նչպիտի խնդու-
թյամբ յես կմեկնեյի այստեղից Ամերիկա՝ քեզ հետ
ապրելու համար:

Արշունը սառեց Վանինայի յերակներում: Ամուս-
նութեան առաջարկի մերժումը միանգամայն խոցեց

նրա հպարտութեանը: Մակայն քիչ անց՝ նա նետվեց
Միասիրիլի գիրկը:

—Դու յերբեք ինձ ավելի սիրելի չես յերեացել,
քան այս բողեյիս,—բացականչեց Վանինան.—Այո,
իմ փոքր գյուղական վիրաբույժ, յես առհավետ քոնն
եմ: Դու մեր նախնի հոռոմեյացիներին մամս մեծ մարդ ես:

Ապագայի մասին ծրագրած բոլոր գիտավորու-
թեանները, մաքի բոլոր տխուր ներշնչումները ան-
հայտացան. այդ բողեյին նրանց տիրապետել եր կա-
տարչալ սերը: Յերբ նրանք նորից ընդունակ յեղան
կշռադատելու, Վանինան ասաց Միասիրիլին.

—Ռոմանյալում յես կլինեմ գրեթե միաժամանակ
քեզ հետ: Յեռ անմիջապես գնում եմ խնդրելու, վոր
ինձ Պորետոտյի⁷) վանաներ նշանակեն. յես կիջևա-
նեմ մեր գղյակում, Ման-Նիկողայում՝ Փորլիի մոտ:

—Այնտեղ յես քեզ հետ կանցկացնեմ իմ վոզջ
կյանքը,—բացականչեց Միասիրիլին:

—Այսուհետե ինձ վիճակված ե ամեն բան հանդը-
նել,—շարունակեց Վանինան խորը հոռաչելով.—Յեռ
կկործանեմ ինձ քեզ համար, սակայն ի՞նչ փուլթ: Իսկ
գու պիտի կարողանամ արդեոք մշտապես սիրել մի
անարգված աղջկա:

—Միթե դու իմ կինը չես,—ասաց Միասիրիլին,—
հավիտյան պաշտելի իմ կինը: Յեռ կկարողանամ սի-
րել և պաշտպանել քեզ:

Վանինան պետք եր դուրս գար տնից՝ այցելու-
թեաններ կատարելու քաղաքում: Հենց վոր նա հե-
ռացավ, Միասիրիլին սկսեց մտածել, վոր իր վարմուն-
քը դեպի սիրուհին դաժան եր:

«Ի՞նչ եր ան ե հայրենիքը,—ինքն իրեն ասաց Միա-

սիրիւլին:— Իս մի կենդանի եյակ չե, վորին մենք պարտավոր ենք յերախտագիտությունն՝ մատուցված վորևե բարիքի համար, և վորը կարող ե գժբախտ լինել և մեզ անիծել՝ յեթե մենք թերանանք մեր պարտքի մեջ: Հա յր են ի ք և աղատությունն— դա նույնն ե, ինչ իմ վերարկուն, այսինքն ինձ համար ոգտակար մի իր, վորը չես պետք ե գնեմ, յեթե չեմ ժառանգել հորիցս: Յե՞վ վերջապես, յես սիրում եմ իմ հայրենիքն ու ազատությունը, վորովհետև դրանք ինձ ոգտակար են: Ի՞նչ, չերը դրանք ինձ պեսքական չեն, այնպես, ինչպես վերարկուն ոգոստոսամսում, ապա ինչո՞ւ յես պետք ե գնեմ դրանք և այն ել այնպիսի թանգ գնով: Վանինան այնքան չքնաղ ե. ինչպիսի շնորհքներով ե ոժտված նա: Շատերը պիտի աշխատեն սիրաշահել նրա սիրտը. նա կմոռանա ինձ: Յեզե՞լ ե արդո՞ք յերբեք մի կին, վորը սոսկ մեկին սիրած լինի: Այս հոռմեյացի իշխանները, վորոնց արհամարհում եմ իբրև քաղաքացիների, բազմաթիվ առավելություններ ունեն իմ համեմատությամբ: Նրանք յերևի վերին աստիճանի հրապուրիչ են: Ա՛խ, յեթե մեկնեմ, Վանինան ինձ կմոռանա, և յես ընդմիշտ կկորցնեմ նրան»:

Գիշերը Վանինան յեկավ նրա մոտ. Միսսիրիլին պատմեց, թե ինչպիսի տարակուսանքների մեջ եր ընկղմվել ինքը, և թե ինչպես եր այժմ մեկնաբանում հայրենիք մեծ բառը, նրա հանդեպ զգացած սիրո շնորհիվ: Վանինան անսահման յերջանիկ եր:

«Յեթե նա ստիպված լինի ընտրություն կատարել իմ և հայրենիքի միջև, — մտածում եր Վանինան, — նա անպայման կգերադասի ինձ»:

Մերձակա յեկեղեցու ժամհարը զարկեց ժամը յերեքը. վերջին հրաժեշտի վայրկյանը հասավ: Պիտորոն դուրս պրծավ իր սիրուհու բաղնիկներից: Նա

արդեն ցած եր իշնում վոքրիկ սանդուխտով, յերը Վանինան արցունքները գսպելով, ասաց նրան ժրպտադեմ:

— Յեթե քեզ խնամած լիներ մի խղճուկ գեղջկուհի, միթե դու վոչինչ չեյիր անի նրա համար քո յերախտագիտությունը հայանելու նպատակով: Միթե դու չեյիր ջանա վարձատրել նրան: Ապագան անորոշ ե, դու պիտի ճանապարհորդես, շրջապատված թշնամիներով. շնորհիբ ինձ յերեք որ ևս ի նշան քո յերախտագիտության, վարձատրիբ ինձ իմ խնամքի համար, իբրև թե՛ յես խեղճ գեղջկուհի յեմ: — Միսսիրիլին մնաց:

Վերջապես նա թողեց Հոռմը: Շնորհիվ մի ոտար դեսպանատնից գնած անցաբրի, նա հասավ իր ընտանիքի գիրկը: Նրա վերադարձը մեծ խնդություն հարուցեց, վորովհետև նրան կարծել ելին մեռած: Միսսիրիլին բարեկամները ուզեցին իր գալուստը տոնել, սպանելով մեկ թե յերկու կարաբիններնիրի: (Այսպես են կոչվում պապի նահանգների ժանդարմները):

— Առանց անհրաժեշտության չսպանենք զենք դործածել իմացող և վոչ մի իտալացու, — ասավ Միսսիրիլին: Մեր յերկիրը կղզի չե, ինչպես յերջանիկ Անգլիան. մենք կարիք ունենք զինվորների, վորպեսզի դիժադրենք Յեվրոպայի թագավորների հարձակման:

Վորոշ ժամանակից հետո, Միսսիրիլին, գրեթե պաշարված կարաբիններից, սպանեց նրանցից յերկուսին Վանինայի տված յերկու առձանակներով: Նրա գլուխը գնահատության դրվեց:

Վանինան դեռևս չեր յերևում Ռոմանյայում. Միսսիրիլին իրեն մոռացված կարծեց: Նրա ինքնասիրությունը խոցվեց: Նա սկսեց խորհել իրեն սիրուհուց

բաժանող հասարակական գիրքերի տարբերության մասին: Մանդաղատանքի ու ապրած յերջանկության հիշատակի ազդեցության տակ նա մտածեց վերադառնալ Հոռոմ, տեսնելու, թե ինչ և անուամբ Վանիսնան: Այս խելացնոր միտքը գրեթե արդեն գերակշռում էր իր պարտքի հանդեպ, չերբ մի չերեկո սարի լանջում գտնվող յեկեղեցու զանգը հնչեց «Երեշտակ այսոն» և այնպես արտասովոր, ասես մտացիր ժամհարը այլ բանով եր զբաղվել: Դա—կարբոնարինների վենտայի հավաքույթի խորհրդանշանն էր, այն վենտայի, վորին անդամագրվել էր Միսսիբիլին Ռոմանյա ժամանելուց հետո: Նույն գիշերը բոլորը հավաքվեցին ճրգնավորների մենարանում, անտառի խորքում: Աֆիոնով թմրած յերկու ճգնավորները հնկատեցին, թե ինչ նպատակի չե ծառայում իրենց տնակը: Միսսիբիլին յեկավ թախծոտ ու մտազբաղ և լսեց, վոր վենտայի պեսը ձերբակալված էր և ինքը, հաղիվ քսանամյա յերիտասարդ, նախասահմանվել էր զեկալար լինելու մի վենտայի, վորի շարքերում կային հիսուն տարեկանից վեր մարդիկ, վորոնք, սկսած 1815 թվի Մյուլրատի³⁾ արշավանքից, մասնակցել էին բոլոր դավադրություններին: Յերբ Միսսիբիլին լսեց, այս անըսպասելի պատվի մասին, նա զղաց, վոր սիրաբ ավելի ուժգին սկսեց բարախել: Հենց վոր մենակ մնաց, վորոշեց այլևս չմտածել յերիտասարդ հոռոմուհու մասին, վորն արդեն մոռացել էր իրեն և իր բոլոր ջանքերը նվիրել ի տ ա լ ի ա ն բարբարոսներից ազատելու*) իր պարտականության իրագործման:

*) Liberar jétalia de barbari 1350 թ. Պետրարքի⁹⁾ ասած խոսքերը, վոր հետադայում կրկնեցին Հուլիոս 2-րդը¹⁰⁾, Մարիավելին¹¹⁾ և կ'մս Ալֆիերին¹²⁾:

Յերկու որ անց, Միսսիբիլին կարգաց իրեն, իբրև վենտայի պետի, ներկայացված քաղաք մանող, զուրս յեկողները զեկույցի մեջ, վոր իշխանուհի Վանիսնան հենց նոր ժամանել էր Ման-Նիկոլա զղջակը: Այս Անունը նրա հոգու մեջ ավելի շուտ շփոթ, քան թե հաճույք հարուցեց: Իզուր նա մտածում էր անխախտ պահել իր հավատարմությունը զեպի հայրենիքը, չբփութալով նույն յերեկո իսկ Ման-Նիկոլա զղջակը. նրա միտքը զբաղված լինելով Վանիսայով, վորին նա ուզում էր անտեսել, արգելք էր հանդիսանում նրան ըստ հարկի կատարելու իր պարտականությունները:

Հետևյալ ուրը նա տեսավ Վանիսային: Յերիտասարդ աղջիկը սիրում էր նրան, ինչպես Հոռոմում: Հայրը, վոր կամենում էր ամուսնացնել նրան, հետաձգել էր մեկնումը: Նա իր հետ բերել էր յերկու հաղար սեքին¹³⁾: Այս անսպասելի ոգնությունը մեծապես նպաստեց Միսսիբիլին պատվով կատարելու վենտայի զեկավարի պարտականությունները: Այդ դրամով դաշույններ պատվիրեցին Կորֆույում¹⁴⁾, կաշառեցին Լեզադի¹⁵⁾ անձնական քարտուղարին, վորին հանձնարարվել էր հալածել կարբոնարիններին: Այսպիսով ձեռք բերվեց բոլոր այն քահանաների անվանացուցակը, վորոնք կառավարության լրտեսներ էյին:

Այս ժամանակներում վերջնականապես կազմակերպվեց մեկն այն ամենից նվազ անմիտ դավադրություններից, վորոնք նյութվում էյին զժբախտ Բտալիայում: Յես այստեղ չեմ ուզում մտնել ավելորդ մանրամասնությունների մեջ: Կոստանափակվեմ լոկ ասելով, վոր յեթե ձեռնարկությունը հաջողությամբ պսակվիր, ապա Միսսիբիլին ամենայն իրավամբ կա-

րող եր իրեն վերադրել փառքի ամենամեծ մասը: Նրա կարգադրութեամբ մի քանի հազար դավադիրներ, համաձայն վորոշ ազգանշանի, պիտի ապստամբվեյին և զենքը ձեռքին պիտի սպասելին զեկավարների դալուստին: Վճռական ըոպեն մոտենում եր, յերբ հանկարծ, ինչպես դա պատահում ե միշտ, դավադրութունը ջլատվեց զեկավարների ձերբակալութեամբ:

Հենց վոր Վանինան հասավ Ռոմանյա, նրան թվաց, թե հայրենիքի սերը իր սիրեկանին մոռացնել կտա յուրաքանչյուր այլ սեր: Յերիտասարդ հոռմուհու ինքնասիրութունը վիրավորվեց: Նա իզուր փորձեց խոհեմ լինել մի սև թախիժ պատեց նրան, ի վերջո նա զարմանքով նկատեց, վոր նզովում ե ազատութունը: Մի անգամ, չերբ յեկել եր Փորլի Միսսիրիլլին տեսնելու, նա չկարողացավ իրեն տիրապետել և վիշտը թագցնել: մինչ այդ լոկ հպարտութունը արգելք եր հանգիստացել նրան Հայտնաբերելու այն:

—Հիրավի,—ասաց նա յերիտասարդին,—դուք սիրում եք ինձ իբրև ամուսին: սակայն իմ տինչածը այդ չի:

Մի քիչ հետո Վանինան սկսեց լաց լինել, սակայն նա ամոթից եր լալիս, վոր նվաստացել եր մինչև հանդիմանանքը: Միսսիրիլլին չափազանց զբաղված լինելով իր ծրագիրներով, անուշադիր թողեց նրա արցունքները:

Հանկարծ Վանինայի մտքով անցավ թողնել սիրեկանին և վերադառնալ Հոռմ: Նա դաժան ուրախութուն եր զգում այդպես պատժել իրեն այն թուլութեան համար, վոր ստիպեց իրեն խոստովանելու մտատանջութունը: Մի պահ լռելուց հետո, վերջապես

վորոշեց անելիքը. նա իրեն անարժան պիտի համարեր Միսսիրիլլին, յեթե իսկույն ևեթ չթողներ նրան: Նա նախորոք հրճվում եր այն մտքիդ, թե ինչպես յերիտասարդն հուզմունքով ու ցավով պիտի նկատեր իր անհետացումը:

Քիչ անց՝ նա խորապես հուզվեց, վոր ինքը չեր կարողացել նվաճել ընտրած մարդու սերը, վորի համար այնքան խելագարութուններ եր արել: Այդ ժամանակ նա խղեց լուրթունք և աշխատեց ամեն միջոցներով ստիպել նրան թեկուզ սիրո մի խոսք արտասանելու: Միսսիրիլլին թեպետ և ընքշանքով խոսեց իր սիրո մասին, բայց շատ ցրված եր. նրա շեշտը ավելի խոր ու զգացված եր, յերբ, պատմելով իր քաղաքական ծրագրերի մասին, նա վշտաձայն բացահանչեց.

—Ահ, յեթե այս վերջին ծրագիրս ել չհաջողվի, յեթե կառավարութունը նորից հայտնաբերի այն, լես առընդմիշտ կհեռանամ հայրենիքից:

Վանինան անշարժ մնաց: Ահա մի ժամ եր, ինչ նա զգում եր, վոր սիրեկանին վերջին անգամն եր տեսնում: Նրա արտասանած խոսքերը իր գլխում ճակատադրական մի միտք ծնեցին: Նա խորհեց. «Կարոնարիններն ինձնից մի քանի հազար սեքեն են ստացել, նրանք համոզված են, վոր յես համակրում եմ նրանց դավադրութեանը և նվիրված եմ իրենց»: Վանինան սթափվեց իր խոհերից միայն նրա համար, վոր Պիետրոյին ասի.

—Դու չես ուզում գնալ Սան-Նիկոլա դըլակը, մի որ ու դիշեր ինձ հետ անցկացնելու: Ձեր վենտայի այս յերեկոյան ժողովում քո ներկայութունը անհրա-

ժեշտ չէ: Վաղ առավոտ, Սան-Նիկոլայում մենք մի-
քիչ կզրոսնենք. սա կմեղմի քո հուզմունքը և կվե-
րադարձնի քեզ պաղարյունությունը, վոր այնքան
անհրաժեշտ է քեզ մոտալուտ մեծ դեպքերում:

Պիեարոն համաձայնեց:

Վանինան հեռացավ նրանից ճանապարհի պատ-
րաստությունները հողալու համար. հեռանալիս, նա
ինչպես այդ անում էր սովորաբար, բանալիով փակեց
փոքրիկ սենյակի դուռը, ուր թագցնում էր սիրե-
կանին:

Վանինան շտապեց իր նախկին սպասուհիներից
մեկի մոտ, վորը ծառայությունը թողել էր ամուս-
նանալու համար և այժմ Ֆորլիում մանրավաճառքով
էր զբաղվում: Գալով նրա մոտ, նա սենյակում գտնե-
վող մի ժամազրքի լուսանցքում արագ գրեց այն
վայրի անունը, ուր պիտի հավաքվեր այդ զիշեր կար-
բոնարիների վենտան: Իր մատնությունը նա վերջաց-
րեց այս խոսքերով. «Կարբոնարիների այս վենտան
կազմված է տասնինը անդամներից, ահա նրանց ա-
նունները և հասցեները»: Յերբ նա ավարտեց ճշգրիտ
ցուցակը, վորից միայն Միսսիրիլիի անունը բացառեց,
նա ասաց կնոջը, վորի հավատարմության վրա վըս-
տահ էր:

—Այս գիրքը անը կարդինալ Լեգազին¹⁶), թող նա
կարդա այնտեղ գրվածը, հետո քեզ վերադարձնի այն:
Ահա քեզ տասը սեքեն: Յեթե չերևես Լեգազը արտա-
սանի քո անունը, մահդ անխուսափելի չե, սակայն
դու իմ կյանքը կփրկես, յեթե կարողանաս Լեգազին
կարգալ տալ այս գրքում գրածը:

Ամեն բան հաջող անցավ: Վախի ազդեցության

տակ Լեգազը մոռացավ իր բարձր աստիճանը: Նա
թույլ աղեց, վոր իրեն հետ խոսել ցանկացող հասա-
րակ կինը ներկայանա զիմակավորված, սակայն շրջ-
թայլած ձևերով: Այս վիճակում վաճառականուհուն
տարան բարձրաստիճան անձնավորության մոտ, վո-
րին նա գտավ պատվարված կանաչ սփռոցով ծածկե-
ված մի մեծ սեղանի յետև:

Լեգազը կարգաց ժամազրքի եջը, իրենից հեռու
բռնելով գիրքը, վորովհետև յերկուզում էր վորևե
աներևույթ թույնից: Աջուհետև նա գիրքը վերա-
դարձրեց վաճառականուհուն և չհրամայեց, վոր հե-
տևեն նրան:

Հալիլ թե քառասուն բույե յեր անցել, ինչ Վա-
նինան թողել էր սիրելիանին, յերբ նա աղախնի վե-
րադարձից հետո նորից գնաց նրա մոտ, կարծե-
լով, թե այլևս իր սիրելին իրեն ևր պատկանում: Նա
ասաց յերիտասարդին, վոր քաղաքում անսովոր մի
շարժում կա. կարբոնարիների պարեկները տեսնվուծ
եյին այնպիսի փողոցներում, ուր, սովորաբար չեյին
լինում:

—Յեթե դու կամենաս լսել ինձ, մենք իսկույն
ևեթ կմեկնենք Սան-Նիկոլա, — ավելացրեց նա:

Միսսիրիլին համաձայնվեց: Նրանք վոտքով գնա-
ցին մինչև յերիտասարդ իշխանուհու կառնթը, վորը
սպասում էր նրանց քաղաքից կես մղոն դուրս: Կա-
ռնթում նստած էր Վանինայի հավատարիմ ու գաղտ-
նապահ սպասուհին, վորին նա լավ էր վճարում:
Հասնելով Սան-Նիկոլա, Վանինան, շփոթված իր ար-
տակարգ վարմունքից, կրկնապատկեց իր սիրալիբ
քնքուշությունը դեպի սիրելիանը: Սակայն սիրո մա-
սին խոսելիս իրեն թվում էր, թե ինքը կատակեր-

գուհու դեր եր կատարում: Նախորդակին, դավաճանութեան բուսելին, նա խղճի խայթի մասին չէր մտածել: Մեղմիկով սիրեկանին բազուկները մեջ, նա ինքն իրեն ասում եր.

«Բավական ե արտասանել սոսկ մի խոսք և նա անմիջապես և ընդմիշտ կատի ինձ»:

Գիշերը Վանինայի ծառաներից մեկը հանկարծ մտավ նրա սենյակը: Այդ մարդը կարբոնարի յեր. սակայն Վանինան չգիտեր: Ուրեմն, մտածեց Վանինան, Միսսիբրիլին մինչևիսկ ամենամանրան մահրամասնութունները գաղտնի յեր պահում իրենից: Նա սարսեց: Ծառան գալիս եր հայտնելու Միսսիբրիլին, վոր նույն գիշերը տասնինը կարբոնարիների աները, Ֆորլիում, շրջապատել և իրենց ձերբակալել են, յերբ նրանք վերադառնում եյին վենտայի ժողովից: Թեպետև այդ պատահել եր անակնկալ կերպով, այնուամենայնիվ նրանցից ինը կարողացել եյին փախչել: Մնացած տասին կարբոնարները միջնաբերդի բանտն եյին տարել: Այնտեղ մտնելիս նրանցից մեկը իրեն գցել եր խորախոր մի ջրհոր և խեղդվել:

Վանինան շփոթվեց. բարեբախտաբար Պիետրոն չնկատեց այդ, թե վոչ նրա աչքերում նա կկարգար հանցանքը:

— Այս բուսելիս, — շարունակեց ծառան, — Ֆորլիի կայազորը շրջափակել ե բոլոր փողոցները: Զինվորներն այնքան մոտ են կանգնած իրարից, վոր յուրաքանչյուրը կարող ե խոսել իր հարևանի հետ: Քաղաքի բնակիչները մի փողոցից մյուսն են անցնում միայն այնտեղից, ուր կանգնել ե հրամանատար ըսպան:

Յերբ ծառան դուրս յեկավ սենյակից, Պիետրոն մի բուսել մտադրապ մնաց:

— Ներկայումս վոչինչ չի կարելի անել, — ասաց նա վերջապես:

Վանինան կիսամեռ վիճակում եր. նա դողում եր սիրեկանի հայացքից:

— Այդ թնչ ե պատահել ձեզ, — ասաց Պիետրոն նըրան:

Այնուհետև նա ուրիշ բանի մասին մտածեց և դարբեց սիրուհուն նայելուց:

Մոտ կեսորին Վանինան համարձակվեց ասելու.

— Ահա մի վենտա ել բացվեց. յես կարծում եմ, վոր դուք միառժամանակ հանգիստ կլինեք:

— Շատ հանգիստ, — պատասխանեց Միսսիբրիլին այնպիսի մի ժպիտով, վորից սարսեց յերիտասարդ պղկը:

Վանինան գնաց այցելելու Սան-Նիկոլա քահանային, վորը թերևս յեզվիտների լրտես եր: Յերբ ժամը յոթին վերադարձավ ճաշելու, նա դատարկ գտավ աջն փոքրիկ սենյակը, ուր թաղնվում եր իր սիրեկանը: Սաստիկ հուզված նա վազեց մյուս սենյակներում նրան վորոնելու, սակայն վոչ մի տեղ չգտավ: Նա հուսահատ վերադարձավ փոքրիկ սենյակը և միայն աջն ժամանակ սեղանի վրա մի տոմս նկատեց. Վանինան կարգաց.

«Յես գնում եմ հանձնվելու Լեպադին. յես այլևս չեմ հավատում մեր գործի հաջողութեանը. յերկինքը մեզ չի հովանավորում. ով մասնեց մեզ, Յերեկ իրեն ջրհոր գցող թշվառականը: Քանի վոր իմ կյանքը պետք չե դժբախտ Խտալիային, յես չեմ սկզբում, վոր

իմ ընկերները, տեսնելով ինձ միակ ազատ ձերբակալու-թյուններից, կարողանան յերեակայիս, վոր յիս եմ մատնել նրանց: Մնաք բարով, յեթե դուք սիրում եք ինձ, աշխատեցեք վրեժխնդիր լինել: Կործանեցեք, վոչնչացրեք մեզ մատնող անդամին, թեկուզ դա իմ հայրը լինի»:

Վանինան ընկավ աթոռի վրա գրեթե ուշաթափ և համակված սուր վշտով: Նա չկարողացավ արտասանել մի բառ անգամ. նրա աչքերը ցամաք ելին և տենդոտ:

Վերջապես նա ծունկի իջավ.

— Աստված իմ, — բացականչեց նա, — ընդունիր իմ յերգումը. այ՛ն, այ՛ն, յիս կալածեմ անդամ մատնողին. բայց նախ ոգնիր ինձ ազատել Պիետրոյին:

Մի ժամ հետո նա ճանապարհվեց դեպի Հոռոմ: Հայրը վաղուց խնդրում էր նրան վերադառնալ: Իր բացակայութեան ժամանակ իշխան դոն Ասարուբալը արդեն վորոշել էր նրա ամուսնությունը իշխան Լիվիո Սավելլիի հետ: Հազիվ էր նա տուն հասել, վոր հայրը, դողալով, խոսեց այդ մասին: Նա շատ զարմացավ, յերբ Վանինան համաձայնվեց ստաջին իսկ խոսքից հետո: Հենց նույն յերեկո կոմսուհի Վիթթելսկիի մոտ հայրը նրան համարյա պաշտոնապես ներկայացրեց դոն Լիվիոին: Վանինան յերկար խոսեց նրա հետ: Դոն Լիվիոն Հոռոմի ամենափայլուն յեքրտասարդներից մեկն էր: Նա ունեւր հիանալի ձիեր և թեպետ խելացի չէր համարվում, բայց ընավորութեամբ թեթևամիտ լինելով, վոչ վոր չէր մտածում, վոր նա կարող էր քաղաքական հարցերով զբաղվել: Վանինան մտածեց, վոր նախապես գլխահան անելով

նա նրան կղարձնի իրեն հարմար մի գործիք: Յեվ վորովհետև դոն Լիվիոն սրբազնագույն Սավելլի — Կատանցարայի, Հոռոմի նահանգապետի և վոստիկանութեան նախարարի, յեզրոր վորդին էր, ապա ինքը յենթադրում էր, վոր լրտեսները չեյին համարձակվել հետևելու նրան:

Մի քանի ուր նրա հետ սիրալիր վերաբերվելուց հետո, Վանինան մի անգամ ասաց յերիտասարդին, վոր նա յերեք իր ամուսինը չպիտի լինի, վորովհետև, ըստ իրեն, չափազանց թեթևամիտ է:

— Յեթե դուք յերեխա չլինեյիք, — ասաց նա նրան, — ձեր հորեղբոր գործակատարները ձեզնից վոչ մի բան չեյին թագցնի: Որինակ, դուք կիմանայիք, թե ինչ են անելու այն կարբոնարիների հետ, վորոնք վերջերս ձերբակալվեցին Ֆորլիում:

Յերկու ուր հետո դոն Լիվիոն յեկավ հաղորդելու նրան, վոր Ֆորլիում ձերբակալված բոլոր կարբոնարիները փախել էյին: Վանինան իր խոշոր սև աչքերը սևեռեց նրա վրա դառն ժպտով, վորը խորն արհամարհանք էր արտահայտում, և ամբողջ յերեկո չըկամեցավ նրա հետ խոսել: Հետեյալ որը դոն Լիվիոն շիկնելով, խոստովանեց, վոր իրեն խաբել եյին:

— Սակայն, — ասաց նա, — յիս ձեռք բերեցի հորեղբորս առանձնասենյակի բանալին և ահետեղ տեսած թղթերից տեղեկացա, վոր հավաքվում է մի գաղտնի հանձնաժողով, կազմված միանգամայն վոստահելի կարողինալներից⁶⁾ և պրելատներից⁷⁾ վորոշելու համար, թե վորտեղ ավելի հարմար է դատել կարբոնարիներին — Ռավեննում, թե Հոռոմում: Ֆորլիում ձերբակալված ինքը կարբոնարիները և նրանց ղեկավարը, մի վոմն Միս-

սիրիլի, վորը հիմարությունն և ունեցել անձնատուր
լինելու, ներկայումս բանտարկված են Սան-Լեոյի*)
ամբողջում:

«Հիմարությունն» բառը լսելիս Վանինան բոլոր ու-
ժով կամթեց իշխանի ձեռքը:

—Յես ուզում եմ անձամբ տեսնել այդ պաշտոնա-
կան թղթերը և ձեզ հետ մտնել ձեր հորեղբոր առանձ-
նասենյակը, — ասաց նա յերիտասարդին:

Դոն Լիվիոն սարսափեց այս խոսքերից. Վանինան
իրենից համարյա անկարելի մի բան էր պահանջում.
սակայն յերիտասարդ աղջկա քմայքը ավելի հրահը-
րեց նրա սերը:

Մի քանի որից հետո Վանինան ծպտված վորպես
տղամարդ, Սավիլլիի տան գեղեցիկ սպասաղգեստը հա-
զին, հնարավորություն ունեցավ կես ժամ անցկաց-
նել վոստիկանության նախարարի առանձնասենյա-
կում, ծանոթանալով նրա ամենագարոնի թղթերի
հետ: Նա խորը ցնծութամբ համակվեց, յերբ այդ
թղթերի մեջ գտավ մեղադրյալ Պիետրո Միսսիրիլլիին
վերաբերող ամենորյա տեղեկագիրը: Թուղթը բռնե-
լիս նրա ձեռները դողում էյին: Կրկին կարդալով այդ
անունը, նա քիչ մնաց ուշաթափվեց: Յերբ Հոոմի նա-
հանգապետի տնից դուրս լեկան, Վանինան թուզ տը-
վեց, վոր դոն Լիվիոն համբուրի իրեն:

— Դուք իմ հանձնարարությունները լավ եք կա-
տարում, — ասաց նա նրան. — Սակայն յես դեռ պիտի
շարունակեմ փորձել ձեզ:

Այս խոսքերից հետո յերիտասարդ իշխանը պատ-
րաստ էր հրդեհելու վողջ Վատիկանը¹⁹⁾, Վանինային

*) Ռոմանիայում, Ռիսինի մոտ: Այս ամբողջում մեռավ Կալիստոս-
ոսն18). այստեղ, ասում են, նրան խեղճամահ արեցին:

դուր գալու համար: Այդ յերեկո Փրանսիական զե-
պանը պարահանդես էր տալիս: Վանինան շատ պա-
րեց և գրեթե ամբողջ ժամանակ նրա հետ: Դոն Լիվիոն
յերջանկությունից արբած էր. հարկավոր էր չթույլ
տալ, վոր նա կշռագատի:

— Իմ հայրը յերբեմն շատ տարրերնակ է լինում, —
ասաց նրան մի անգամ Վանինան. — Նա այս սուսփոտ
հեռացրեց իր յերկու ծառաներին, վորոնք յեկան ինձ
մոտ վողբալու իրենց դժբախտությունը: Իրանցից
մեկը խնդրեց ինձ աջակցել իրեն ծառայության մըտ-
նել ձեր հորեղբոր՝ Հոոմի նահանգապետի մոտ, իսկ
մյուսը, վոր Փրանսիական պատերազմի ժամանակ
հրետանու զինվոր է չեղել, կկամենար պաշտոնի մըտ-
նել Սենտ-Մենտ ամբողջում:

— Յես յերկուսին էլ կվերցնեմ ինձ մոտ ծառայու-
թյան, — ասաց յերիտասարդ իշխանը վողբում:

— Միթե յես այդ եմ խնդրում ձեզնից, — առարկեց
հարատությամբ Վանինան, — յես բառ առ բառ ձեզ
կրկնում եմ այդ խեղճերի աղերսը. միանգամայն ան-
հրրաժեշտ է, վոր նրանք ստանան իրենց խնդրածը
և ուրիշ վոչինչ:

Դժվար, համարյա անկարելի խնդրք: Մոնսենյոր
Կատանցարան իր մոտ ծառայության է վերցնում
միմիայն իրեն լավ ծանոթ մարդկանց:

Ձնայած արտաքուստ հաճույքներով լի իր կյան-
քին, Վանինան տանջվում էր խղճահարությունից և
իրեն շատ դժբախտ էր զգում: Իրադարձություններէ
դանդաղ ընթացքը սպանում էր նրան: Հոր գործա-
կատարից նա ստանում էր անհրաժեշտ դրամական
միջոցները: Պարտավոր չէր արդյոք փախչել հայրե-

նական անից և գնալ Ռումանյա փորձելու աղատել սիրեկանին: Վորքան ել անխոհեմ ու անհեթեթ լինեեր այս միտքը, Վանինան պատրաստ եր իրադործել այն, սակայն ճակատագիրը նրան գթաց:

Դոն Լիվիոն ասաց.

— Միասիրելիքի վիճտայի պատկանող տաս կարբոնարինները պիտի փոխադրվեն Հոռոմ, ուր պիտի դառնան, բայց դատավճիռը պիտի գործադրվի Ռումանյայում: Հորեղբայրս այս լուրը իմացել է այսօր՝ պայից: Ամբողջ Հոռոմում դու և յես միայն գիտենք այս գաղտնիքը: Այժմ գոհ եք:

— Դուք իսկական աղամարդ եք դառնում: Նվիրեցեք ինձ ձեր լուսանկարը:

Միասիրելիքի Հոռոմ հասնելու նախորեյին Վանինան ինչ վոր պատրվակով Չիտտա-Կաստելլյանա գնաց: Ռումանյայից Հոռոմ փոխադրվող կարբոնարինները գիշերն այդ քաղաքի բանտում պիտի անցկացնեյին: Վանինան տեսավ Միասիրելիքին առավոտցան, յերբ բանտից դուրս եր գալիս. նա՝ շղթայակապ, առանձին սայլի վրա յեր. թեպետ և շատ տժգույն եր յերևում, սակայն անվհատ: Մի ծեր կին մանուշակների փուռնջ նետեց նրան. Միասիրելիքն շնորհակալությամբ ժպտաց:

Սիրեկանի տեսքը Վանինային նոր արիություն ներշնչեց. նրա միտքն սկսեց կրկնապատիկ յեռանդով գործել:

Դրանից դեռ շատ առաջ նա մի մեծ ծառայություն եր մատուցել արքա Կարլին, նպաստելով նրան, վոր դառնա քահանա Սենտ-Անժ ամրոցում, ուր այժմ պիտի կալանափակվեր իր սիրեկանը, այդ բարի յեկեղեցականին նա իրեն խոստովանահայր եր նշա-

նակել. իսկ Հոռոմում խոստովանահայր նշանակվել մի իշխանուհու, նահանգապետի ազգակցուհու, դա քիչ բան չեր:

Փորլիի կարբոնարինների գատը յերկար չտևեց: Ռեակցիոն կուսակցությունը, վորպեսզի մի կերպ վրեժխնդիր լինի կարբոնարիններից Հոռոմ ժամանելու համար, վոր ինքը չեր կարողացել կանխել, նրանց դատող հանձնաժողովը կազմեց ամենափառամուկ և հետագիմական պրելատներից: Հանձնաժողովի նախագահն ինքը վոստիկանության նախարարն եր:

Կարբոնարինների դեմ գործող որենքը պարզ եր: Փորլիի կարբոնարինները գլխության վոչ մի հույս չեյին ակնկալում. այնուամենայնիվ նրանք բոլոր հնարավոր միջոցներով պաշտպանեցին իրենց կյանքը: Դատավորները վոչ միայն մահվան դատապարտեցին նրանց, այլ վոմանք նույնիսկ պահանջեցին մահապատիժը կենսազործել խոտազույն տանջանքներով, որինակ, ձեռնահատությամբ և այլն: Սակայն, վոստիկանության նախարարը, վորի կարիերան հասել եր իր տենչած գագաթնակետին (վորովհետև մարդը հեռանում է այդ աստիճանից լոկ պաշտոնաթող լինելու դեպքում), ձեռնահատության կարիքը չեր զգում. այնպես վոր դատավճիռը հայտնելով պային, նրան հաջողվեց դատապարտյալների մահապատիժը փոխարինել մի քանի տարվա բանտարկությամբ, բացառությամբ Պիեարո Միասիրելիքի: Վոստիկանության նախարարի աչքում այդ յերիտասարդը վոտանգավոր մի Փանատիկոս եր. բացի այդ, նա արդեն մի անգամ ել մահվան եր դատապարտվել յիրկու կարաբիններնրի

սպանութեան անհրաժեշտութիւնը, վորի մասին մենք վերելում խոսեցինք:

Վանինան դատաւճռի և նրա մեղմացման մասին լսեց պապի մոտից նախարարի վերադառնալուց մի քանի րոպե հետո:

Մոնսենյոր Կատանյարան հետևյալ որը մոտ կես գիշերին վերադառնալով իր պալատը, իր սենեկապահին այնտեղ չգտավ. գարմացած նա մի քանի անգամ զանգահարեց. վերջապես հայտնվեց մի ապուշ ծեր ծառա. նախարարը զայրացած վորոշեց ինքն անձամբ հանել իր շորերը: Նա բանալիով փակեց դուռը. սենյակում անասելի տոթ եր. շորերը հանեց և, ծալած՝ շղթանց աթոռի վրա այնքան ուժգին, վոր աթոռի վրայով անցան—դիպան լուսամուտի մուտքին և վարագույրին, վորի յետևում ուրվագծվեց մի մարդու կերպարանք: Նախարարը շտապ նետվեց դեպի մահճակալը և մի ատրճանակ վերցրեց: Յերբ կրկին ուղղվեց դեպի լուսամուտը, բոլորովին յերիտասարդ մի սղամարդ, սրբադնադույնի տան սպասադեստը հագին, մոտեցավ նրան ատրճանակը ձեռքին: Սյս տեսնելով, նախարարը նշան բռնեց և պատրաստվում եր կրակելու, յերբ յերիտասարդն ասաց նրան, ծիծաղելով.

—Սյո ինչ ե, մոնսենյոր, միթի դուք չեք ճանաչում Վանինա Վանինային:

—Ի՞նչ ե նշանակում այս անտեղի կատակը, —բարկացած առարկեց նախարարը:

—Մոսենք սառնասրտութեամբ, —ասաց յերիտասարդ ազջիկը, —նախ՝ ձեր ատրճանակը լցված չէ:

Նախարարը զարմացած ստուգեց Վանինայի ասածը, ապա բաճկոնակի գրպանից մի դաշույն*) հանեց: Վանինան ասաց նրան թովիչ և փոքր ինչ հրամայական տոնով.

—Նստենք, մոնսենյոր:

Յեվ ինքը հանդարտ նստեց բազմոցի վրա:

—Ասացեք, մենակ եք դուք գոնե, —հարցրեց նախարարը:

—Մեն մենակ, յերդվում եմ ձեզ, —բացականչեց Վանինան:

Նախարարը համենայն դեպս ստուգեց այս խոսքերը. նա խնամքով հետախուզեց ամբողջ սենյակը, նայեց ամենուրեք և նորից դրանից հետո միայն նրանց աթոռի վրա, Վանինայից յերեք քայլ հեռու:

—Յես ի՞նչ շահ ունեմ, —ասաց Վանինան քնքուշ ու հանդարտ յեղանակով, —զավաղել ձեզ պես վողջամիտ մի մարդու կյանքի դեմ, վորին պիտի փո-

*) Լոմենյացի մի պրելատ, անկասկած, ի վիճակի չէր լինի գտաղած հմտութեամբ ու արիւթեամբ հրամայել մի գորաբանակի, ինչպես այդ քաննցս պատահել է, որինակ, Մալեյի գործում, դիվիզիայի մի գորավարի, վորը Փարիզի վոտիկանութեան նախարարն եր: Մալայն Լոմենյացի պրելատը յերեք թույլ չէր տա, վոր իրեն ձերբակալեն իր տանն իսկ և այդպես դրութեամբ: Նա կերկու դեր իր պայտոնակիցներին շարախնդ ծագբանքին յենթարկելուց: Յերբ հոսմեյացին դիտե, վոր իրեն ատում են, նա միշտ լավ և զինված լինում: Ավելորդ ե այստեղ հիշատակել մյուս բոլոր այն տարբերութունները, վորոնք կան փարիզեցիներին և հոմեյացիներին խոսելու և վարկեղակերպի սիջու շեռու աղ տարբերութունները մեղմելու ցանկութեանից, մենք համարձակ գրում ենք դրանց մասին Սյս պատմութեամբում նկարագրված հոմեյացիները ֆրանսիացի լինելու պատկեր չունեն:

խարինե, ամենայն հավանականութեամբ, ապիկար և տաքարյուն մի մարդ, իրեն և ուրիշներին կործանելու ընդունակ միայն:

—Ապա ինչ եք ուզում, որիորդ,—ասաց նախարարը սրտնեղած: Այս տեսարանը ինձ համար հաճելի չէ և պետք է անմիջապես վերջ տալ գրան:

—Այն, ինչ յես ուզում եմ ավելացնել,—հարեց Վանինան հպարտութեամբ, հանկարծ մոռանալով իր նախկին թովիչ շեշտը,—ավելի շուտ վերաբերում է ձեզ, քան ինձ: Կարբոնարի Միսիբրիլի բարեկամները ցանկանում են, վոր նրա կյանքն անվտանգ մնա, յեթե նա յենթարկվի մահապատժի, ապա դուք ևս մի շաքաթ հետո կհետևեք նրան. այս գործում յես վոչ մի կերպ շահագրգռված չեմ: Յես դիմեցի այս անմիտ քայլին, վորից դուք գանդատվում եք, նախ զվարճանալու համար, և ապա, վորպեսզի ծառայութեան մատուցեմ իմ բարեկամութենեբից մեկին: Յես ուզեցի,—շարունակեց Վանինան նորից հարգալիբ ու քաղաքավարի տոնով,—յես ուզեցի նույնպես ծառայութեան մատուցել մի խելամիտ մարդու, վորը շուտով լինելու յե իմ մոտիկ ազգականը և վորը հավանականաբար շուտով մեծ հոչակ պիտի ձեռք բերի իր տոմի համար:

Նախարարը ներողամտաբար ժպտաց. անշուշտ Վանինայի գեղեցկութունը նպաստեց նրա տրամադրութեան փոփոխման: Հոռոմում ամենքին հայտնի յեր մոնսենյոր Կատանցարայի ունեցած սիրալիբ վերաբերմունքը դեպի գեղեցիկ կանայք. իսկ Վանինան, Մավելլիի տան սպասազգեստը հալին, պիբկ ձգված մետաքսի գուլպաներով, կարմիր բաճկոնով, արծաթա-

կար և տրեզազարդ կարճ վերարկույով, և ձեռքին ատրճանակ—իբրք վոր գերազանցապես հրապուրիչ ելու:

—Իմ ապագա հարսիկ,—ասաց նախարարը գրեթե ծիծաղելով,—դուք ձեզ թույլ եք տվել մի անմիտ կատակ, վորն իհարկե վերջինը չպիտի լինի:

—Յես հուսով եմ, վոր ձեզ նման վողջամիտ մի անձնավորութեուն, — պատասխանեց Վանինան,—չի մատնի իմ գաղտնիքը, մտնալանդ նա այդ մասին յերբեք վոչինչ չի ասի դոն Լիվիոին. իսկ յեթե դուք խոստանաք ինձ՝ խնայել իմ բարեկամուհու հովանավորյալի կյանքը, ապա յես մի համբուշք կտամ ձեզ:

Յեով այսպիս շարունակելով խոսակցութեունը կիտակատակ, կիսալուրջ, ինչպես սովորաբար անում են հոռոմեյացի կանայք մինչև իսկ ամենակարևոր խնդրներում, Վանինային հաջողեց ատրճանակի սպառնալիքի տակ սկսած այս տեսակցութեունը ացնալիս մի բնույթ տալ, վոր իբր թե յերիտասարդ իշխանուհի Մավելլին յեկեկ է այցելելու իր ապագա ամուսնու հորեղբոր, Հոռոմի նահանգապետին:

Քիչ անց, մոնսենյոր Կատանցարան, հավաստիացնելով հանդերձ, վոր ինքը վախի ազդեցութեան տակ յերբեք վոչինչ չեր անի, սկսեց իր ազգակցուհուն պատմել այն բոլոր դժվարութեունների մասին, վորոնց նա պիտի հանդիպեր, յեթե ձեռնարկեր Միսիբրիլի կյանքը փրկելու գործը: Սոսելիս, նախարարը Վանինայի հետ յերթևեկում եր պենչակում. նա բուխարիկի վրայից լիմոնատի մի շիշ վերցրեց և լցրեց բյուրեղյա բաժակը: Հենց այն բուրեղին, յերբ նա բաժակը մոտեցնում եր շրթներին, Վանինան այն պոկեց նրա ձեռքից և միառժամանակ պահելով իր ձեռքում, ասես

ցրվածությամբ լուսամուտից շարտեց պարտեզը: Մի քանի բոպե հետո՝ նախարարը մի տուփից շոկուրագե կանֆետ վերցրեց: Վանինան այդ ել խլեց նրա ձեռքից և ասաց ծիծաղելով:

— Զգուշ յեղեք, ձեր տանը ամեն բանի մեջ թուշն են խառնել, դավադրելով ձեր կյանքի դեմ: Յես շատ ճիգ թափեցի կանխել վտանգը, ի վերջո ինձ շնորհվեց իմ ասպագա ազգակցի կյանքը: Յես այդ արեի, վորովհետև չեյի ուզում Սավելիի ընտանիքը մտնել բոլորովին ձեռնուռնաչն,

Մոնսենյոր Կատանցարան շատ դարմացած շնորհակալություն հայտնեց ազգակցուհուն և մեծ հույսեր ներշնչեց Միսսիրիլիի կյանքի ասպանությունից վերաբերյալ:

— Մեր գործարքը կնքված է,— բացականչեց Վանինան;— և ի հաստատություն իմ խոսքերի, ահա հասուցումը,— շարունակեց նա, համբուրելով պատկառելի աստիճանավորին:

Նախարարը հաճույքով ընդունեց պարզելը:

— Յես պետք է ձեզ ասեմ, սիրելի Վանինա,— ավելացրեց նա, վոր ինքս արջուն չեմ սիրում: Բացի այդ, յես տակավին յերիտասարգ եմ, թեպետև շատ հնարավոր է ձեզ համար արգեն ծեր եմ թվում: Հույս ունեմ ապրելու, մինչև այն սրբորը, յերբ այս որվա թափած արջունը մեր արատը պիտի լինի:

Արգեն ժամը յերկուսն էր, յերբ մոնսենյոր Կատանցարան Վանինային ուղեկցեց մինչև պարտեզի դռնակը:

Հետևյալ որը, յերբ նախարարը գնաց պապի մոտ,

իր անելիքից շփոթված, նորին վեհափառությունն նրան ասաց:

Նախ, յես ձեզնեց մի շնորհ եմ խնդրում. Ֆորլիի կարբոնարիներից մեկը մնաց մահվան դատապարտված: Այս միտքը հալածում է քունս. նրան պետք է աղատել:

Տեսնելով, վոր պապը անդիտակցաբար իր դիտավորություններին ընդառաջ էր գնում, նախարարը խոշոր առարկություններ հարուցեց, բայց ի վերջո զրեց մի հրովարտակ, կամ motu proprio²⁰), վորը սովորության հակառակ պապն անձամբ ստորագրեց:

Վանինան մտածել էր, վոր թերևս ինքը ձեռք բերի իր սիրեկանի ներման շնորհը, բայց յերկյուղում էր, վոր կփորձեն թունավորել նրան: Ինչ նախորեյին, Վանինան, իր խոստովանահոր՝ աբբա Կարիի միջոցով, Միսսիրիլիին ուղարկել էր մի քանի փաթեթ ծովային բիսկվիտ և խորհուրդ տվել կառավարություն կողմից իրեն տված սնունդին չդիպչել:

Հետո իմանալով, վոր Ֆորլիի կարբոնարիները շուտով պիտի փոխադրվեն Սան-Լեոյի ամրոցը, Վանինան ուզեց փորձել ճանապարհին Միսսիրիլիին տեսնել, յերբ նա կանցներ Չիտտա Կաստելլանայից. ինքըն այդ քաղաքն հասավ կալանավորներից քսանչորս ժամ առաջ: Այնտեղ նա հանդիպեց աբբա Կարիին, վորը մի քանի որ առաջ էր յեկել: Աբբա Կարին բանտապահից թույլատվություն էր ստացել Միսսիրիլիի համար ներկա լինելու գիշերվա պատարագին, բանտի մատուռում. Վանինայի խնդրանքով նա ստացավ առավել մեծ արտոնություն. յեթե Միսսիրիլիին համաձայնվեր, վոր իր ձեռքերն ու վոտները շղթայեն, ա-

պա բանտապահը պատրաստ եր քաշվելու մատուռի դուռը, աջնպես վար միշտ աչքի առաջ ունենալով հանդերձ կալանավորին, վորի համար պատասխանատու չեր, միևնույն ժամանակ չկարողանար լսել նրա խոսակցութիւնը Վանինայի հետ:

Վերջապես Վանինայի բախտորոշ ուրը հասավ: Նա վաղ առավոտովանից փակվեց բանտի մատուռումը: Ով պիտի կարողանա պատմել այդ յերկարատե որվա ընթացքում նրան հուզող մտքերը: Նա մտածում եր, թե արդո՞ք Միսսիրիլիի սերը բալականաչափ ձեռնդ եր, վորպեսզի կարողանար ներել իրեն: Ինքը մատնել եր վենտան, սակայն միևնույն ժամանակ փրկել եր սիրածի կյանքը: Յերբ վողջախոհութունն եր գերիշխում իր տանջւից հոգում, Վանինան հույս ուներ, վոր սիրեկանը կհամաձայնվի միասին Իտալիայից հեռանալու. ինքը մեղանչել եր նրա դեմ, վորովհետե խելահողորեն սիրում եր նրան:

Յերբ ժամը չորսը հնչեց, Վանինան հեռվից լսեց ձիերի սմբակների զոփյուռը, կարարիններներն ելին գալիս: Յուրաքանչյուր զոփյուռը ասես արձագանքում եր Վանինայի սրտում: Քիչ անց՝ նա պարզորոշ լսեց սալիերի դրդոցը, վորոնցով բերում ելին կալանավորներին: Մայլերը կանգ առան բանտի առաջ, փոքրիկ հրապարակում: Վանինան տեսավ, թե ինչպես յերկու կարաբիներն եր տեղից բարձրացնում ելին Միսսիրիլիին, վորը մենակ եր նստած սայլակում և շղթաների ծանրութիւնից շարժվել անզամ չեր կարողանում:

Գրոնե նա կենդանի յե,—ասաց ինքն իրեն Վանինան արտասովից աչքերով,—դեռ նրան չնե թունավորեր:

Ջարհներելի յերեկո. խորանի մոտ բարձր դրված լապտերը, վորի համար բանտապահը խնայում եր չուղը, դժգույն լուսավորում եր մատուռը:

Վանինայի աչքերը հածում ելին դեռևս մեջնադարում, հարեան բանտում մեռած մի շարք իշխանավորների շիրիմների վրա: Իրանց մահարձանները ահարկու տեսք ունեյին:

Ազմուկը վազուց դադարել եր: Վանինան թաղվեց մոայլ մտորումների մեջ: Կես գիշերվա ժամը հնչելուց հետո նրան թվաց, թե մի թեթև աղմուկ ե լըսում, կարծես թե չղջիկն անցավ սրընթաց: Նա ուղեց քայլել, բայց գրեթե անզգա ընկավ խորանի ցանկապատի վրա: Նույն րոպեյին նրա առաջ հայտնվեցին յերկու ուրվականներ, վորոնց մերձենալը Վանինան չեր նկատել: Այդ՝ բանտապահն ու Միսսիրիլին ելին. յերիտասարդ կարբոնարին այն աստիճան ծանրաբեռնված եր շղթաներով, ասես պարուրված եր նըրանցով: Բանտապահը բացեց մի լապտեր և դրեց խորանի ցանկապատի վրա, Վանինայի մոտ. այսպիսով կալանավորը միշտ նրա աչքի առաջ կլիներ: Այնուհետե ինքը գնաց—տեղավորվեց մատուռի դռան մոտ: Հենց վոր բանտապահը հեռացավ, Վանինան փաթաթվեց Միսսիրիլիի վիզը, սակայն նրան իր կրճքին սեղմելով նա զգաց միայն նրա ստուր և սրածայր շղթթաները: Ո՞վ եր նրան հագցրել այդ շղթաները, մըտածեց նա. խորհելով այդ մասին նա այլևս հաճույք չեր զգում սիրեկանին գրկելու: Այս ցալին հաջորդեց մի ավելի սուր ցավ՝ մի ըոպե նրան թվաց, թե Միսսիրիլին գիտեր իր հանցանքի մասին, վորովհետե նա մեծ սառնությամբ ընդունեց իրեն:

Սիրելի բարեկամ,—ասաց վերջապես յերիտասարդը Վանինային,—ցավում եմ, վոր դուք սիրում եք ինձ: Յես իզուր վորոնում եմ և չեմ գտնում իմ մեջ այնպիսի մի արժանիք, վորը կարողանար ձեզ ներշնչել այդպիսի մի սեր դեպի ինձ: Հավատացեք, լավագույն և անձնատուր լինել ավելի քրիստոնեյական զգաղումներին. մոռանանք անցյալում մեզ մտորեցնող պատրանքները. յես չեմ կարող պատկանել ձեզ. իմ ձեռնարկումների մշտական անհաջողութեանը թերևս առաջ և գալիս այն բանից, վոր յես շարունակ մահացու մեղքի մեջ եմ յեղել: Չնայած, վոր չես ելի վեհտայի դեկավարը, ապա ինչո՞ւ յես ել չձերբակալվեցի իմ բարեկամների հետ Փորլիի ճակատագրական այն գիշերում: Ինչո՞ւ վտանգի պահին յես դիրքիս վրա չզանվեցի: Ինչո՞ւ իմ բացակայութեամբ յես առիթ տվի ամենահալի կասկածներին.—վորովհետև ինձ համակել եր մի այլ կերք, քան Իտալիայի ազատութեան սերը:

Վանինային անչափ զարմացնում եր Միսսիրիլլիի հետ տեղի ունեցած փոփոխությունը: Թեպետ նա շատ ել չէր նիհարել, բայց ասես յերեսուն տարեկան լինելու Այս փոփոխությունը Վանինան վերազրեց բանտում կրած տառապանքներին և հորդառատ արցունք թափեց:

Ա՛հ,—ասաց նա սիրեկանին,—չե՞ վոր բանտապանները խոստացել էյին ձեզ հետ վատ չվարվել:

Մինչդեռ հարցն այն եր, վոր մահվան մոտեցումը յերիտասարդ կարբոնարիի սրտում վերածնել եր կրոնական բոլոր այն սկզբունքները, վորոնք համակերպվում էյին Իտալիայի ազատութեան հանդեպ տածած

իր սիրո հետ: Վանինան հետզհետե հասկացավ, վոր իր սիրեկանի մեջ նկատած դարմանալի փոփոխությունը հեռեանք չէր բանտում կրած վատ վերաբերմունքի, այլ ծնունդ բարոյական զրգապատճառների: Մինչ այդ անասհման կարծած իր վիշտը առավել ևս սաստկացավ:

Միսսիրիլլին լուռ եր: Վանինան ասես խեղդվում եր հեծկլտանքներից: Յերիտասարդ տղամարդը ավելացրեց, փոքր ինչ հուզված.

—Յեթե այս աշխարհում յես սիրելի վորեք մեկին, այդ դուք կլինեյիք, Վանինա. բայց, փառք ասածո, այժմ յես մի նպատակ ունեմ իմ կյանքում,—կմեռնեմ բանտում, կամ կւվում՝ Իտալիայի ազատութեան համար:

Նորից տիրեց լուռութուն. ակներև եր, վոր Վանինան չէր կարողանում խոսել, թեպետև իզուր փորձում եր: Միսսիրիլլին շարունակեց.

—Պարտքի կատարումը, իմ բարեկամս, պահանջում է ծանր գոհաբերություններ և կապված է վորոշ տառապանքների հետ: Յեթե այդ այդպես չլինեք. ապա ել ինչ արժեք կունենար հերոսությունը: Ոտք տվեք, վոր այլևս չեք աշխատի ինձ հետ տեսնվելու:

Վորքան թույլ եր տալիս իր ամբարցված շղթան, նա ձեռքը շարժեց և մատները մեկնեց Վանինային:

—Յեթե դուք հանդուրժեք, վոր յես, ձեր յերբեմնի սիրելին: մի խորհուրդ տամ, ապա անտրտունջ ամուսնացեք այն արժանավոր մարդու հետ, վորին ձեզ կանխորոշել է ձեր հայրը: Նրան անախորժ խոստովանություններ մի՞ք անի, բայց մյուս կողմից յերբեք մի՞ք աշխատի ինձ տեսնելու. այսորվանից ևեթ

մենք ոտարներ լինենք մեկ մեկու համար: Դուք հայ-
րենիքի ծառայութեան համար մեծ գումարներ գոհա-
բերեցիք: Նա չերբեք ազատվի իր բռնակալնե-
րից, այդ գումարները դուք լիովին յետ կտանաք
ազգային գույքից:

Վանինայի սիրտը ցավագնորեն ձմլտվեց: Այս խոս-
քերը արտասանելիս, Պիետրոյի հայայքը լող այն
պահին եր սեր առկայծում, յերբ նա արտասանում
էր հայրենիք բառը:

Ի վերջո, հպարտութունը յերիտասարդ իշխանու-
հուն ոգնութեան յեկավ: Նա իր հետ վերցրել էր ա-
զամանդներ և փոքրիկ խարտոցներ, առանց պատաս-
խանելու Միսսիրիլիին, դրանք հանձնեց նրան:

—Յես ստիպված եմ ընդունելու դրանք,—ասաց
Միսսիրիլիին,—վորովհետև պարտավոր եմ աշխատել
փախչելու: Բայց յերբեք չպիտի տեսնեմ ձեզ: Այդ
յես յերգվում եմ ձեր նոր բարերարութուններով:
Մնաց բարով, Վանինա. խոսք տվեք յերբեք նամակ
չգրել ինձ, յերբեք ինձ հետ տեսակցութուն չփնտրել.
Թողեք ինձ հայրենիքին, ձեզ համար յես մեռած եմ.
Մնաց բարով:

—Վնչ,—պատասխանեց Վանինան ցասկոտ,—յես
ուզում եմ, վոր դու իմանաս, թե ինչ եմ արել՝ դըր-
դըված քո սիրուց:

Ապա նա պատմեց բոլոր իր ձեռնարկութեան մա-
սին այն բոլորից հետո, յերբ Միսսիրիլիին հեռանա-
լով Սան-Նիկոլա դոլակից, գնացել հանձնվել էր Լե-
գադին: Վերջացնելով այս պատմութունը Վանինան
շարունակեց:

—Սա դեռ վոչինչ, յես ավելին եմ արել քո հան-
դեպ տածած սիրուս համար:

Այնուհետև նա պատմեց նրան իր մատնութեան
մասին:

—Վնչ, հրեշ,—գոչեց Պիետրոն գազազած, հարձակ-
ելով նրա վրա և աշխատելով սպանել նրան իր շըղ-
վթաներով:

Յեզ նա կսպաներ, յեթե չլիներ բանտապահը, վո-
րը շտապել էր դեպի նրանց, լսելով նրանց ճիչերը:
Նա բռնեց Միսսիրիլիին:

—Առ, վերցրու, հրեշ, յես վոչ մի բանով չեմ ու-
զում քեզ պարտական լինել,—ասաց Միսսիրիլիին շը-
պըրտելով Վանինային, վորքան շղթաները թույլ ե-
յին տալիս, խարտոցներն ու ազամանդները. ապա
շտապ հեռացավ:

Վանինան ցավից մորմոքվեց: Նա Հոռոմ վերադար-
ձավ և քիչ անց լրագրները հաղորդեցին, վոր նա ա-
մուսնացել էր իշխան դոն Լիվիո Սավելլիի հետ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կարբոնարի—XIX դ. իտալական բուրժուական հեղափոխական Կարբոնարի իտալերեն—carbonaro—նշանակում է ածխագործ (ըսկըզբում կարբոնարիների զաղանի ընկերություն ժողովները անդի էյին ունենում անտաններում): Կարբոնարիները պայքարում էին դեմոկրատական կարգերի և Իտալիայի վերականգնման համար:

2. Յեսվիտս—Jésuiste—«Հիսուսի ընկերություն»—աեակցիոն կաթոլիկ կրոնական միաբանություն անդամ:

3. Սիլվա—(138-78 մինչ ն. թ.)—Հռոմի ղեկավարը և զորավար:

4. Վեսաս—կարբոնարիների զաղանի ընկերության ստորին բջիջ:

5. Բրեյա—քաղաք Հոմբրդիայում (հյուսիսային Իտալիայում):

6. Լիվի—հինավուրց գրամական միավոր:

7. Պոբեսսո—բուժավար քաղաք Իտալիայում:

8. Մյուրաս, Ժոսեֆ—(1767-1815)—Նապոլեոնի զորավարներէց մեկը, Նեապոլի թագավոր:

9. Պեսարո, Ֆրանչեսկո (1304-1374) — իտալական մեծագույն բանաստեղծ:

10. Հուլիոս II—(1443-1513) հռոմեական պապ:

11. Մախավիի—(1469-1527)—հռչակավոր իտալական զորդ և հասարակական գործիչ:

12. Ալեիերի—(1749-1803)—իտալական բանաստեղծ և գրամատուրգ:

13. Սեֆե—հինավուրց վտակաբան:

14. Կոմու—կղզի Միջերկրական ծովում:

15. Լեզադ—Հռոմի պապի դեսպան:

16. Կարդինալ—կաթոլիկ բարձրաստիճան հոգևորական:

17. Պրեյաս—հոգևորական աստիճանավոր:

18. Կալիստոս—(1743-1795)—իտալացի շառլատան—բժիշկ, վարն իր թե ալընապետում եր բոլոր հիվանդությունների բուժիչ միջոցներին:

19. Վոսիկան—Հռոմի պապի աթոռանիտոր:

20. Motu proprio—(լատ.) ինքնակամ:

Պատ. իմք. Սիբաս

Տեխ. իմք. Ս. Ալեքսանյան


Արքագրիչ՝ Հ. Մանուկյան

Գրավորաբ լիազոր՝ Ա-3057, Հրատ 4397, Պատվեր 1330, Տիրամ 4000
Թուղթ 72×110, Տպագրական 1,6 մամ. Մեկ մամ. 51, 200 նիշ-
Հեղինակային 2 մամ.

Հանձնված է արտադրության 17 դեկտ. 1937 թ. ստորագրված է
սուպագրության 7 հունվ. 1938 թ.

Գինը 65 կոպ.

Պետհրատի տպարան, Ֆերեան, Լենինի փող. № 65



ՀՀ Ազգային գրադարան



NL0319245

